ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդի 2014 թվականի հունվարի 15-ի թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգ»-ի (**այսուհետ՝ Կարգ**) 2.2-րդ, 2.4-րդ և 2.5-րդ կետերով.

հաշվի առնելով այն, որ 2017 թվականի համար նախատեսվող հանրային պաշտպանների թափուր տեղերի (հաստիքների) քանակը կազմում է ընդամենը **19**, այն է՝

1. Արարատի մարզ - **երկու տեղ՝** մեկ լրիվ հաստիք քրեական ուղղվածության, մեկ 0,25 հաստիք քաղաքացիական և վարչական ուղղվածության.
2. Արմավիրի մարզ - **մեկ տեղ՝** մեկ լրիվ հաստիք քրեական ուղղվածության.
3. Գեղարքունիքի մարզ - **մեկ տեղ՝** 0,5 հաստիք քրեական ուղղվածության.
4. Լոռու մարզ - **երկու տեղ՝** երկու 0,5 հաստիք քրեական ուղղվածության.
5. Կոտայքի մարզ - **երեք տեղ՝** երկու 0,5 հաստիք քրեական ուղղվածության, մեկ 0,25 հաստիք քաղաքացիական և վարչական ուղղվածության.
6. Շիրակի մարզ - **երկու տեղ՝** երկու 0,5 հաստիք քրեական ուղղվածության
7. Սյունիքի մարզ - **երկու տեղ՝** մեկ 0,5 հաստիք քրեական ուղղվածության, մեկ 0,25 հաստիք քրեական ուղղվածության.
8. Վայոց Ձորի մարզ - **մեկ տեղ՝** մեկ 0.5 հաստիք քրեական ուղղվածության.
9. Երևան քաղաք - **չորս տեղ՝** 4 լրիվ հաստիք քրեական ուղղվածության.
10. Երևան քաղաք - **մեկ տեղ՝** 1 լրիվ հաստիք քաղաքացիական և վարչական ուղղվածության.

նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործնականում հանրային պաշտպանի թափուր հաստիքներ կարող են առաջանալ ոչ միայն տարեվերջին, այլ նաև տարվա ընթացքում, ինչպես նաև այն, որ անհրաժեշտության դեպքում հանրային պաշտպանի գրասենյակում չընդգրկված փաստաբանների հետ ժամավճարային դրույքաչափեր նախատեսող աշխատանքային պայմանագրեր կնքելիս, որպես կանոն, նախապատվությունը տրվում է հանրային պաշտպանի

17 նոյեմբերի 2016թ.
թիվ 461-Լ

թեկնածությունների ցուցակում ընդգրկված փաստաբաններին.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. 2017 թվականի համար հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով անցկացնել հետևյալ մրցույթները (**այսուհետ՝ Մրցույթ**)՝

1) **քաղաքացիական և վարչական ուղղվածության հանրային պաշտպաններ նշանակելու համար մրցույթ**՝ Երևան քաղաքի և մարզերի հանրային պաշտպանների թափուր տեղերը համալրելու համար.

2) **քրեական ուղղվածության հանրային պաշտպաններ նշանակելու համար մրցույթ**՝ Երևան քաղաքի և մարզերի հանրային պաշտպանների թափուր տեղերը համալրելու համար:

2. Սահմանել, որ՝

1) **Մրցույթի գրավոր փուլը** կանցկացվի ՀՀ, ք. Երևան Զաքիյան 2 հասցեում (ՀՀ փաստաբանական դպրոց, 3-րդ հարկ) **2016 թվականի նոյեմբերի 28-ին, ժամը 11.00-ին:** Մրցույթի գրավոր փուլի տևողությունը սահմանվում է 4 (չորս) ժամ.

2) Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են սույն որոշումը հրապարակելու օրվանից մինչև 2016 թվականի նոյեմբերի 24-ը ներառյալ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 10:00-ից մինչև 17:00-ը ՀՀ, ք. Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ հասցեում.

3) փոստով ուղարկված դիմումները չեն համարվի ընդունված, եթե ՀՀ փաստաբանների պալատը ծրարը փաստացի ստանա 2016թ. նոյեմբերի 24-ից հետո.

4) **Մրցույթի գրավոր փուլը հաղթահարած հավակնորդը կհրավիրվի հարցազրույցի** Կարգի 4.11 կետի համաձայն:

3. Հաստատել հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով անցկացվող մրցույթին մասնակցելու դիմումի ձևը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

4. Հաստատել մրցույթի քննական թերթիկի ձևը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

5. ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝

- Մրցույթի անցկացման վերաբերյալ հայտարարությունը տեղադրել ՀՀ փաստաբանների պալատի ինտերնետային կայքէջում և վարչական շենքում (4-րդ հարկ) գտնվող հայտարարությունների տախտակի վրա.

- օժանդակել մրցութային հանձնաժողովին Մրցույթի կազմակերպման և անցկացման աշխատանքների կատարման համար, այդ թվում՝ ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

17 նոյեմբերի 2016թ.
թիվ 461-Լ
ք. Երևան